

**ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ և ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վարդան ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լուսինե ԳԱՄՊԱՐՅԱՆ
Երևանի Գլաձոր համալսարանի
Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. վճարահաշվարկային համակարգ, էլեկտրոնային առևտուր, անկանխիկ հաշվարկներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը և դրանց սրընթաց մուտքը կյանքի բոլոր ոլորտներ դարձել է ժամանակակից զարգացման կարևորագույն նախապայման: Չափազանց մեծ է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը վճարահաշվարկային համակարգերի ձևավորման, էլեկտրոնային առևտրի կազմակերպման, էլեկտրոնային կառավարման և ռացիոնալ գործունեության ծավալման այլ ասպարեզներում: Դրանց լայն տարածվածության արդյունքում այսօր հասարակությունն ապրում է էլեկտրոնային փոխանցումների, ինտերնետ բանկերի և առցանց վճարումների աշխարհում: Էլեկտրոնային վճարման համակարգերի արագ զարգացմանը մեծապես նպաստեց աշխարհում օնլայն խանութների, ֆինանսական միջնորդության նոր ինստիտուտների, բանկային և էլեկտրոնային այլ ծառայությունների ստեղծման գործընթացը: Ջարգացած երկրները՝ ուժեղ ՏՏ արդյունաբերությամբ, արագորեն հասկացան առցանց փոխանցումների կարևորությունը և ստեղծվեցին այնպիսի հզոր համակարգեր, ինչպիսիք են PayPal-ը, Amazon-ը, Google Chekout-ը և այլն: Էլեկտրոնային առևտուրն աստիճանաբար դառնում է գլոբալ տնտեսության անհրաժեշտ բաղադրիչը՝ հանդես գալով որպես տնտեսական աճի արդյունավետ կատալիզատոր: Այդ իսկ պատճառով, ինտերնետի և էլեկտրոնային առևտրի հնարավորություններից ձգտում են օգտվել տնտեսության և հասարակության բոլոր սուբյեկտներն ու շերտերը, բնականաբար, ստեղծելով դրա համար համապատասխան մեխանիզմներ ու ենթակառուցվածքներ:

Հայաստանի հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացմանը խոչնդոտող հիմնական գործոնները կապված են անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության կամ դրանց թերզարգացածության հետ: Դրանցում կարևոր դեր ունեն վճարահաշվարկային համակարգերը, որոնց գործառույթների մի զգալի մասի իրականացման միջոց են հանդիսանում էլեկտրոնային փողերը: Ինտերնետի հնարավորություններն ըստ արժանվույն չօգտագործելու պարագայում ընկերությունների մասին առավելագույն տե-

ղեկատվություն պարունակող վեբկայքերը կարող են դառնալ միջոցների անարդյունավետ օգտագործման և նույնիսկ դրանց վատման աղբյուրներ, ընկերություններին չապահովելով սպասվելիք եկամուտներ: Մինչդեռ, ինտերնետ միջավայրում հասցեական մարքեթինգի շնորհիվ պոտենցիալ գրանորդ գտնելը բավական դյուրին է, իսկ հաճախորդների համար լրացուցիչ հարմարավետ պայմաններ ապահովելով, այդ թվում էլեկտրոնային փողերի կիրառմամբ էլեկտրոնային առևտրի կազմակերպումը կարող է տեղափոխվել որակական նոր աստիճան, ինչը թույլ կտա ընկերություններին բարձրացնել իրենց մրցունակության մակարդակը և դուրս գալ միջազգային շուկաներ: Ժամանակակից տեխնոլոգիաները վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին և, մասնավորապես, բանկերին հնարավորություն են ընձեռում մատուցվող ծառայությունների մի մասը տեղափոխել որակապես նոր ասպարեզ՝ դրանով իսկ ներգրավելով լրացուցիչ սպառողների՝ կրճատելով նրանց սպասարկման ծախսերը:

Չնայած 33-ում վարվող էլեկտրոնային առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումներին՝ առաջնային խնդիրը շարունակում է մնալ հանրապետությունում անկանխիկ շրջանառության խթանումը՝ նվազեցնելով ստվերայնության աստիճանը տնտեսական համակարգում: Անկանխիկ շրջանառությունը խթանելու և վճարումների ոլորտն ավելի թափանցիկ և վերահսկելի դարձնելու գործընթացներում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից սկզբնական փուլում կարևորվում են համապատասխան իրավական ակտերը լրամշակելու ճանապարհով վճարահաշվարկային կազմակերպությունների գրանցման ու գործունեության մատչելի և իրատեսական պահանջների սահմանումը, սպասարկման ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Վճարահաշվարկային համակարգում թվային ոլորտի զարգացման պատմությունը Հայաստանում ընդգրկում է գրեթե երկու տասնամյակ, սակայն համաշխարհային զարգացման միտումները վկայում են, որ առաջիկայում ինտերնետի միջոցով իրականացվող առևտուրը բոլոր երկրներում, այդ թում և Հայաստանում, դառնալու է առևտրի իրականացման կարևորագույն և հիմնական եղանակներից մեկը: Ինտերնետի միջոցով իրականացվող առևտուրը համապատասխան ապահովության երաշխիքներ է ենթադրում ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ դրանցից օգտվողների համար: Նման երաշխիքները վերաբերվում են ինչպես գործարքի իրականացման կանոններին, այնպես էլ դրանց իրավական հետևանքներին, որոնք կարող են ծագել նաև գործարքի մասնակիցների կողմից փոխադարձ պարտավորությունների չկատարման հետևանքով:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական, այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով իրականացվող գործունեություն է համարվում անձի ինքնու-

րույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակն, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Այդպիսի գործունեության իրավական հիմքերը սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով,¹ որով ձեռնարկության կառավարման համակարգում էլեկտրոնային ձևերի կիրառությունը որևէ կերպ չի սահմանափակվում: Պայմանագրերի, գործարքների կնքման և, ընդհանրապես, էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով փոխանցված փաստաթղթերի իսկությունն ու անվտանգությունն ապահովվում է փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրման միջոցով: Հայաստանում այս խնդիրների օրինական կարգավորումը իրականացվում է «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային, թվային ստորագրությունների մասին» ՀՀ օրենքով²: Սակայն, էլեկտրոնային փողերով իրականացվող առևտրի հետ կապված հարաբերությունների հնարավոր առավելագույն կարգավորման նպատակով անհրաժեշտ է էլեկտրոնային առևտրի մասին օրենքի ընդունումը: Այն պետք է սահմանի էլեկտրոնային առևտրի իրականացման պայմանները, էլեկտրոնային փող ծախսողների և ստացողների պարտականություններն ու իրավունքները, էլեկտրոնային փաստաթղթերի կիրառման առանձնահատկությունները, գործարքների իրականացման կանոնները, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացման և ճանաչման ձևերն ու դեպքերը:

Արդյունավետ ինտերնետ բիզնեսի իրականացման կարևոր պայմաններից մեկն այնպիսի վճարահաշվարկային համակարգի առկայությունն է, որը հասանելի է լայն հասարակայնությանը, ապահովում է միջնորդավճարների նվազագույն մեծություն, գործում է ակնթարթորեն և թույլ է տալիս մնալ անանուն: Ներկայումս նման պահանջներին բավարարող և ինտերնետ միջավայրում վճարումների իրականացման ամենատարածված միջոցը էլեկտրոնային փողերով վճարային համակարգերն են³:

Հայաստանում ինտերնետային վճարային համակարգերն, ի տարբերություն հետխորհրդային մի շարք այլ երկրների, գտնվում են զարգացման սաղմնային փուլում և դեռևս չեն ձևավորվել վճարումների իրականացման գործուն մեխանիզմներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ինտերնետ բիզնեսի զարգացման տեմպերի նվազմանը: Հանրապետությունում ոչ բոլոր ինտերնետ խանութներում են կիրառում օնլայն վճարման համակարգեր, որը պայ-

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրք

² «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային, թվային ստորագրությունների մասին» ՀՀ օրենք

³ Козье Д. «Электронная коммерция: Пер. с англ.».- М.: Издательско-торговый дом «Русская Редакция»/ 1999 с. 49.

մանավորված է նման համակարգերի ցածր պաշտպանվածության, գործունեության ոլորտների սահմանափակ ընդգրկվածության և գնորդների անվստահության հանգամանքով: Ինտերնետ խանութներից գնումների դիմաց միջազգային պրակտիկայում կիրառվող վճարման հայտնի եղանակներից (կանխիկ վճարումներ, վճարումներ պլաստիկ քարտերով, էլեկտրոնային փողեր) ՀՀ-ում կիրառվում են հիմնականում կանխիկ վճարումները, իսկ կատարված օնլայն վճարումների մոտ 80 տոկոսը Հանրապետությունում բաժին է ընկնում ԱրՔա համակարգին:

Ինտերնետային վճարային համակարգերի բացակայությունից առաջին դժգոհողները և տուժողները հայ ֆրիլանսերներն են և էլեկտրոնային վաճառքի փոքր օնլայն ֆիրմաները: Հայաստանի ծրագրավորողները և դիզայներները, որ մեծապես ծառայություններ են մատակարարում արտասահմանյան շուկաներին, տուժում են վաճառողի հաշիվ բացելու հնարավորության բացակայությունից, և ստիպված են վճարներն ստանալ այլ համակարգերով, որոնք ոչ յուրաքանչյուր հաճախորդի պարագայում է համարվում նպատակահարմար: Ավելի մեծ ընկերությունները կարող են բացել հաշիվներ՝ օգտագործելով կրեդիտ քարտեր, սակայն դա թանկ է և ֆրիլանսերին հարմար չէ: Հայաստանում ամբողջ SS համակարգը տուժում է այս խնդրից: Մեր կարծիքով, խնդրի լուծման համար էլեկտրոնային վաճառքի թողարկման մեջ պետք է արմատավորել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք կիրառվում են ճապոնական Sogo Shosha ընկերությունների անկանխիկ էլեկտրոնային վճարումների համակարգում:


Sogo Shosha (総合商社)-ն ճապոնիային բնորոշ սկզբունքներով գործող ընդհանուր առևտրային ընկերությունների համակարգ է որոնք իրականացնում են ապրանքների և նյութերի լայն ընտրանու վաճառք: Բացի առևտրից, դրանք կարող են հանդես գալ որպես ներդրումային բանկեր կամ անհատ ընկերություններ: Իր շրջանառության ծավալներով և միջազգային վաճառքի ուժով Sogo Shosha համակարգը մեծապես նպաստում է տեղական փոքր և միջին բիզնեսին, ինչը, հատկապես արտասահմանյան շուկաներում մարքեթինգի և իրացման առումով կարող է առընչվել որոշակի դժվարությունների: Համակարգն աջակցում է ֆինանսական, մարքեթինգի, տեղափոխման, առաքման ինչպես նաև բրենդի կրևորման հարցերում: Այլ խոսքով, Sogo Shosha համակարգի աջակցությունը չափազանց մեծ է ճապոնական փոքր և միջին ընկերություններին, որն երաշխավորում և խթանում է դրանց գործարար նախաձեռնությունները: Դիտարկված մոտեցումը հատկապես ուսանելի է Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման առումով, սակայն ներկայումս հանրապետությունում առկա են մի շարք դժվարություններ, որոնք հաղթահահարելու համար անհրաժեշտ է.

- ձեռնարկատիրության արդիական մոտեցումների կիրառում,
- տնտեսական ազատ մրցակցության հաստատում,
- հասարակության շերտերի միջև խիստ բևեռացվածության մեղմում,
- միջին խավի ձևավորում,
- ստարտափների և փոքր բիզնեսի արտահանման հնարավորությունների ընդլայնում,
- մարքեթինգի, վաճառքի և հաճախորդների սպասարկման որակի բարձրացում,
- վարձատրության համակարգի բարելավում,
- օտար լեզուների իմացության կատարելագործում և այլն:

Հարկ է ի նկատի ունենալ, որ վերը նշված խոչընդոտները առկա էին ճապոնիայում մոտ հարյուր տարի առաջ, որոնք աստիճանաբար հաղթահարվելով, երկրի տնտեսական համակարգը հասցրեցին զարգացման բարձր մակարդակի: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանում հետևողականորեն պետք է օգտվել տվյալ ասպարեզում առկա համաշխարհային փորձից և հանրապետությունում արմատավորել այնպիսի սկզբունքներ և մոտեցումներ, ինչպիսիք են Sogo Shosha համակարգին: Դա էականորեն կնպաստի հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների բրենդի ձևավորմանը, PR-ի, Մարքեթինգի, ֆինանսական խորհրդատվության, մասնագիտական աջակցության և այլ խնդիրների լուծման արդյունավետության բարձրացմանը: Ակնհայտ է, որ շատ սկսնակ գործարարներ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ունեն փորձված կառավարողների մասնագիտական աջակցության կարիքը: Մեր կարծիքով, հայկական թվային Sogo Shosha-ն կարող է տրամադրել այդ ծառայությունները սկսնակ ընկերություններին, որի օգնությամբ նրանք ավելի հասուն և ուժեղ կդառնան: Փորձված մենեջերներով զինված հայկական Sogo Shosha-ն դրական ազդեցություն կարող է ունենալ տնտեսական և ֆինանսական ոլորտների վրա:

Ձարգացած էլեկտրոնային առևտրի համակարգի առկայության կարևորության մասին են խոսում մի շարք երկրներում տվյալ ոլորտում գոյություն ունեցող աճի տեմպերը: Հատկապես Ասիայում է նկատվում էլեկտրոնային առևտրում էական աճ: Վերջին վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ աշխարհում ինտերնետ օգտագործողների մոտավորապես 42 տոկոսը ապրում է Ասիայում: Այստեղ ավելի ու ավելի շատ մարդիկ են ձգտում ունենալ սմարթ հեռախոսներ և սմարթ բջջային սարքեր ինտեր-նետային

առևտրից օգտվելու համար⁴: Հետևաբար, չի զարմացնում այն փաստը, որ էլեկտրոնային առևտրում B2C⁵ վաճառքի հիմնական մասն իրացվում է հենց Ասիական երկրներում (տես գծապատկեր 1 և աղյուսակ 1):



Գծապատկեր 1. Էլեկտրոնային առևտրի B2C վաճառքը ասիական երկրներում 2013-2015թթ.⁶

Աղյուսակ 1. Էլեկտրոնային առևտրի ծավալներն ըստ երկրների (մլրդ դոլար)

	2013	2014	2015
Չինաստան	\$181.6	\$274.5	\$358.5
Ճապոնիա	\$118.5	\$127.0	\$133.5
Հարավային Կորեա	\$18.5	\$20.2	\$21.9
Հնդկաստան	\$16.3	\$20.7	\$25.6
Ինդոնեզիա	\$1.7	\$2.6	\$3.5
Այլ ասիական երկրներ	\$25.1	\$28.1	\$31.5

Ասիայի Խաղաղ Օվկիանոսյան երկրներում անցկացրած հարցման մասնակիցների 37 տոկոսը պատասխանել է, որ իրենք ավելի նպատակահարմար են գտնում ապրանքներ և ծառայություններ ձեռք բերել բջջային սարքավորումների միջոցով: Այդ ցուցանիշը այստեղ ավելի բարձր է, քան համաշխարհային միջին ցուցանիշը (26 տոկոս), ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Խաղաղ Օվկիանոսյան Ասիայի երկրներում բավականին զարգացած է

⁴ www.go-globe.com/blog/ecommerce-in-asia/
⁵ Գնորդների խումբ, ովքեր իրականացնում են գնումներ անձնական, ընտանեկան և տնային օգտագործման համար: - Минин А.А. (անձնական կայք՝ a-minin.ru)
⁶ www.go-globe.com/blog/ecommerce-in-asia/

Էլեկտրոնային առևտուրը, որը խոսում է այդ համակարգի հարմարավետության և մատչելիության մասին:

Էլեկտրոնային առևտրից օգտվում են աշխարհի գրեթե բոլոր երկրները: Իսպանիայում ինտերնետ օգտագործողների 67 տոկոսը օգտվում է էլեկտրոնային առևտրից: Յուրաքանչյուր տասը ինտերնետ օգտագործողներից յոթը օգտվում է էլեկտրոնային առևտրից, որը կազմում է 19.2 միլիոն Իսպանացի: Օգտագործողները կատարում են օնլայն գնումներ ամսական գրեթե երեք անգամյա հաճախականությամբ և յուրաքանչյուր առևտրի գումարը կազմում է մոտ 70 Եվրո⁷: 2013 թվականին Թուրքիայում էլեկտրոնային առևտրի ծավալը հասել է 6.34 մլրդ Եվրոյի, իսկ 2014 թվականին այն աճել է 33 տոկոսով և այժմ Թուրքիայում էլեկտրոնային առևտրի ծավալը կազմում է ամբողջ Եվրոպայի մանրածախ առևտրի 1.6 տոկոսը: Իտալիայում ինտերնետ օգտագործողների 36 տոկոսը կամ 11 մլն Իտալացի օգտվում է օնլայն առևտրից: Շվեյցարիայում էլեկտրոնային առևտուրն աճում է տարեկան 10 տոկոսով, իսկ Ավստրիայում 2014 թվականին գրանցվել է 40 տոկոս աճ: Եվրոպայում էլեկտրոնային վաճառքի 500 խոշոր կազմակերպություններ 2014 թվականին գրանցել են 124 մլրդ Եվրոյի աճ, իսկ էլեկտրոնային առևտրի B2C վաճառքի ծավալը կազմել է 423.8 մլրդ Եվրո:

Հայաստանում «Արմենիան Քարդ»-ի տրամադրած տվյալների համաձայն՝ 2012թվականի հունվար ամսից մինչև հոկտեմբեր «ԱրՔա» համակարգի առցանց վաճառակետերում իրականացվել է գրեթե 9 մլն դրամի՝ ավելի քան վեց հարյուր հազար գործարք: Նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի նկատմամբ ծավալն աճել է 61.5 իսկ քանակը՝ 57.3 տոկոսով: Այս ոլորտի ցուցանիշների աճն ունի դինամիկ բնույթ և ամսեամիս գրանցվում է զգալի աճ: Միևնույն ժամանակ էլեկտրոնային առևտրի ներկայիս ընթացակարգի համաձայն՝ եթե արտերկրից պատվիրված ապրանքի արժեքը չի գերազանցում 150.000 դրամի սահմանն ու 20 կիլոգրամը, ապա սպառողը կարող է ստանալ այն առանց մաքսազերծման և հավելավճարի: Այս, այսպես կոչված, «արտոնությունից» կարելի է օգտվել միայն տարին երկու անգամ, ինչը, բնականաբար, չի կարող խթանել էլեկտրոնային առևտրի զարգացումը Հայաստանում: Ակնհայտ է, որ հանրապետությունում էլեկտրոնային առևտուրը և վճարային համակարգերը կլինեն մատչելի ու հասանելի սպառողների համար այն ժամանակ, երբ Հայաստանում ստեղծվի էլեկտրոնային վաճառքի համապատասխան ենթակառուցվածքներ: Այդ դեպքում ոչ միայն կբարելավվի բնակչության կենսամակարդակն, այլև կխթանվի ձեռնարկատիրական գործունեությունը հանրապետությունում:

⁷ www.ecommercenews.eu

Վարդան ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Լուսինե ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վճարահաշվարկային համակարգերի և էլեկտրոնային առևտրի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Բանալի բառեր. վճարահաշվարկային համակարգ, էլեկտրոնային առևտուր, անկանխիկ հաշվարկներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը և դրանց սրընթաց մուտքը կյանքի բոլոր ոլորտներ դարձել է ժամանակակից առաջընթացի կարևորագույն նախապայման: Հոդվածը նվիրված է Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացման հիմնախնդիրներին, դրանց մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությանը, ներդրմանը ուղղված մոտեցումների մշակմանը, ինչպես նաև էլեկտրոնային փողերի շրջանառությանը խոչնդոտող հիմնական գործոնների բացահայտմանը: Հոդվածում մշակվել է էլեկտրոնային առևտուրը և վճարային համակարգերը սպառողների համար մատչելի ու հասանելի դարձնելու ուղիներ:

Вардан БОСТАНДЖЯН, Лусине ГАСПАРЯН

Проблемы развития расчетно-платежных систем и электронной торговли РА

Ключевые слова: расчетно-платежная система, электронная торговля, безналичный расчет, информационные технологии

Бурное развитие информационных технологий и их стремительное вхождение во все области жизни стало важной предпосылкой современного прогресса. Статья посвящена проблемам развития электронной торговли в Армении, изучению их методологических основ, разработке различных подходов, а также выявлению основных факторов, препятствующих обороту электронных денег. В статье разработаны пути достижения приемлемости и доступности электронной торговли и платежных систем для потребителей, а также пути создания соответствующих структур в РА.

Vardan BOSTANJIAN, Lusine GASPARYAN

Development of Payment System and Ecommerce

Key words: payment system, e-commerce, cash settlements, information technologies.

The development of information technologies and its entrance into every sphere of life has become the main condition of the modern progress. The article is devoted to the main problems of the development of e-commerce, the research of its methodological bases, treatment approach of its installment as well as the revelation of the main factors that prevent the e-money circulation. In the article ways of making available the e-commerce and payment system for the consumers are processed, as well as ways of creating corresponding infrastructures in the republic.